



ք. Երևան, 29.03.16 թ.

Ելք № 019

ՀՀ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ,

ՀՀ ԿԱ ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ

Հայտնում ենք Ձեզ, որ որոշ հարկ վճարողներ դիմում են կազմակերպությանը, հայտնելով այն մասին, որ որոշ հարկային տեսչություններից ստանում են կամերալ ուսումնասիրության արդյունքում հայտնաբերված անհամապատասխանությունների, անճշտությունների, խախտումների վերաբերյալ արձանագրություններ, որոնցով առաջարկվում է վերանայել ԵՏՄ անդամ պետություններից ներմուծված ապրանքների մասով ներմուծման հարկային հայտարարագրերով հայտարարագրված և վճարված ավելացված արժեքի հարկի գումարների հաշվանցման մոտեցումները: Ընդ որում, հաշվանցման վերանայման համար որպես հիմնավորում նշվում է ՀՀ Ֆինանսների նախարարի 2015 թվականի ապրիլի 30-ի թիվ 5 պաշտոնական պարզաբանումը:

1. «ՀՀ և Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների միջև անուղղակի հարկերի հաշվարկման և վճարման առանձնահատկությունների մասին» ՀՀ օրենքի՝

- 7-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն «Անուղղակի հարկերի մասին» արձանագրության 19-րդ կետի կիրառության իմաստով ներմուծվող ապրանքների հաշվառման օր է համարվում ապրանքները ՀՀ տարածք փաստացի ներմուծելու (Հայաստանի Հանրապետության պետական սահմանը հատելու) օրը:

- նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն ներմուծվող ապրանքների համար հաշվարկված ԱԱՀ-ի գումարները ՀՀ պետական բյուջե են վճարվում մինչև ապրանքները ՀՀ տարածք փաստացի ներմուծելու օրը ընդգրկող ամսվան հաջորդող ամսվա 20-ը ներառյալ՝ որպես հարկային մարմինն վճարվող գումարներ:

- 8-րդ հոդվածի համաձայն «Անուղղակի հարկերի մասին» արձանագրության 20-րդ կետի կիրառության իմաստով ապրանքների ներմուծման դեպքում հարկ վճարողը պարտավոր է ներմուծելու օրը ընդգրկող ամսվան հաջորդող ամսվա 20-ը ներառյալ սահմանված ժամկետներում իր հաշվառման վայրի հարկային մարմին ներկայացնել ներմուծողի լրացրած՝ ներմուծման հարկային հայտարարագիրը:

2. ՀՀ Ֆինանսների նախարարի 2014 թվականի դեկտեմբերի 29-ի N 965-Ն հրամանով հաստատված՝ ներմուծման հարկային հայտարարագրով որպես պարտադիր լրացման ենթակա տեղեկատվություն նախատեսված է ներմուծման հաշվետու ժամանակաշրջանը և ներմուծման ամսաթիվը:

3. ՀՀ Ֆինանսների նախարարի 2015 թվականի ապրիլի 30-ի «Ավելացված արժեքի հարկի հաշվարկի ձևի լրացման որոշ հարցերի վերաբերյալ» թիվ 5 պաշտոնական պարզաբանման՝

- 3-րդ կետով սահմանված է, որ ԵՏՄ անդամ պետություններից ՀՀ ներմուծված ապրանքների մասով՝ ապրանքների փաստացի ներմուծելու օրը ներառող հաշվետու ժամանակաշրջանի ԱԱՀ-ի հաշվարկի 15-րդ կետի [Ա] վանդակում լրացվում է օրենքով սահմանված կարգով որոշվող ԱԱՀ-ով հարկման բազան, իսկ [Բ] վանդակում՝ ՀՀ հարկային մարմիններին վճարված (վճարման ենթակա) ԱԱՀ-ի գումարը,

- 4-րդ կետով սահմանված է, որ ԵՏՄ անդամ պետություններից ՀՀ ներմուծված ապրանքների մասով ներմուծման հարկային հայտարարագրերում առանձնացված և տվյալ հաշվետու ժամանակաշրջանում հարկային մարմիններին վճարման ենթակա գումարները, որոնք չեն վճարվել տվյալ հաշվետու ժամանակաշրջանում և, որոնց մասով հաշվանցում կատարելու

իրավունքի ձեռքբերման պահը «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի համաձայն հետաձգվում է մինչև վճարման պահը, լրացվում են ԱԱՀ-ի հաշվարկի 16.1-րդ կետում (ձեռքբերված ապրանքների մասով դեբետի հետաձգում):

- 5-րդ կետով սահմանված է, որ ԵՏՄ անդամ պետություններից ներմուծված ապրանքների մասով ներմուծման հարկային հայտարարագրերում առանձնացված և տվյալ հաշվետու ժամանակաշրջանում հարկային մարմիններին վճարած ԱԱՀ-ի այն գումարները, որոնց մասով հաշվանցման իրավունքը «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի համաձայն հետաձգվել էր նախորդ հաշվետու ժամանակաշրջաններում, արտացոլվում է ԱԱՀ-ի այդ գումարների վճարման հաշվետու ժամանակաշրջանի համար ներկայացվող ԱԱՀ-ի հաշվարկի 16.2-րդ կետում (ներմուծման հարկային հայտարարագրերում առանձնացված և հաշվանցման ենթակա ԱԱՀ-ի գումարները արտացոլելով 16.2 տողի [Ա] վանդակում՝ որպես ԱԱՀ-ի դեբետի ավելացում):

4. «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն ԱԱՀ վճարող անձինք հաշվետու ժամանակաշրջանում պետական բյուջե են վճարում այդ ժամանակաշրջանում իրականացված հարկվող գործարքների (գործառնությունների) հարկվող շրջանառության նկատմամբ հաշվարկված ԱԱՀ-ի գումարը, որից հաշվանցվում (պակասեցվում) են ԵՏՄ անդամ պետություններից ՀՀ տարածք ներմուծված ապրանքների համար սահմանված կարգով և չափերով ՀՀ հարկային մարմիններին վճարված ԱԱՀ-ի գումարների չափով՝ դրանց վճարման, իսկ ճշտված ներմուծման հարկային հայտարարագրի ներկայացման դեպքում՝ հայտարարագրի ներկայացման և վճարման օրն ընդգրկող հաշվետու ժամանակաշրջանի համար ներկայացվող ԱԱՀ-ի հաշվարկով: Ընդ որում, նշված հոդվածի վերլուծությունից պարզ է դառնում, որ ԱԱՀ-ի գումարների հաշվանցման համար անհրաժեշտ՝ պարտադիր բավարարման ենթակա երկու պայմանի (հայտարարագրի ներկայացման և վճարման) առկայություն անհրաժեշտ է միայն ճշտված ներմուծման հարկային հայտարարագրի ներկայացման դեպքի համար:

Մինչդեռ կամերալ ուսումնասիրության արդյունքում հայտնաբերված անհամապատասխանությունների, անճշտությունների, խախտումների վերաբերյալ արձանագրություններով հարկային տեսչությունների կողմից, առանց դրա համար անհրաժեշտ օրենսդրական կարգավորումների առկայության, հարկ վճարողներին առաջարկվում է վերանայել օրենքով նախատեսված հաշվանցման կարգից տարբերվող այլ կերպ իրականացնել հաշվանցումը:

Կից Ձեզ է ներկայացվում նման արձանագրություններից մեկ օրինակ: Նշված օրինակում, մասնավորապես, նշված է, որ (մեջբերվում է).

«1.2 Ընկերությունը կողմից 2015 թ. սեպտեմբեր ամսին ԵՏՄ անդամ պետություններից կատարվել է ներմուծում, որի ԱԱՀ-ի գումարը կազմել է 100 հազ. դրամ: Ներմուծման հարկային հայտարարագիրը ներկայացվել է հոկտեմբերին, իսկ ԱԱՀ-ն վճարվել է սեպտեմբերին: Ելնելով վերոգրյալից հայտնում է, որ ԵՏՄ անդամ պետությունից ապրանքների ներմուծման մասով ԱԱՀ-ի հաշվանցման իրավունքը ձեռք է բերվում հոկտեմբեր ամսին, այսինքն՝ այն հաշվետու ժամանակաշրջանի ԱԱՀ-ի հաշվարկով, որ հաշվետու ժամանակաշրջանում ապահովվում են հաշվանցում կատարելու համար օրենքով սահմանված պահանջները՝ ներմուծման հայտարարագրի ներկայացում և այդ հայտարարագրում առանձնացված ԱԱՀ-ի վճարում (<Ավելացված արժեքի հարկի հաշվարկի ձեվի լրացման որոշ հարցերի վերաբերյալ > ՀՀ ՖՆ 30.04.2015թ N5 պաշտոնական պարզաբանում): Տվյալ դեպքում սեպտեմբեր ամսվա ԱԱՀ հաշվարկում կատարվել է ավել հաշվանցում:»:

Նշված բովանդակությունից պարզ է դառնում, որ հարկային տեսչությունները շփոթել են ճշտված ներմուծման հարկային հայտարարագրի ներկայացման դեպքի հետ, որի դեպքում անհրաժեշտ է երկու պայմանի (հայտարարագրի ներկայացման օր և վճարման օր) առկայություն: Հետևաբար, հարկային տեսչությունների կողմից կազմված և հարկ վճարողներին ուղղվող արձանագրություններով հարկ վճարողներին ներկայացվում են օրենքից չբխող պահանջների կատարում:

Տեսականորեն չի բացառվում, որ որոշ ժամանակահատված հետո, նույն այդ հարկ վճարողների մոտ պետական բյուջեի փոխհարաբերությունների ճշտության ստուգման շրջանակներում ստուգող մարմնի կողմից որպես հաշվանցման կարգի խախտում դիտարկվի արձանագրություններով առաջարկվող մոտեցումներով հաշվանցումների կատարման դեպքերը:

Ելնելով վերոշարադրյալից, խնդրում ենք քննարկման առարկա դարձնել վերոշարադրյալ խնդիրը, հարկ վճարողներին զերծ պահել օրենքից չբխող պահանջների առաջադրումից և կարգավորել արդեն իսկ նշված խնդրի մեջ հայտնված հարկ վճարողների օրենքով սահմանված կարգով հաշվանցման իրավունքը:

Առդիր՝ 1 թերթ:

Հարգանքով՝

Հ/Կ նախագահ

Փ. Թադևոսյան